Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
հունվարի 21-ի N 48 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿԱՄԱՎՈՐ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ (ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻՆ ԿԱՄ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ)՝ ԻՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿԻՐ ԿԱՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՐՐՈՐԴ՝ ՄԻՋԱՆՑԻԿ ԵՐԿՐՆԵՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՎԻԶԱՅԻ ՍՏԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են կամավոր վերադարձի մասին դիմում ներկայացրած անձանց (ապաստան հայցողներին կամ փախստականներին)՝ իրենց քաղաքացիության կամ հիմնական բնակության երկիր կամ հնարավոր երրորդ՝ միջանցիկ երկրներ մուտք գործելու համար անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթերի և վիզայի ստացման գործում աջակցության հետ կապված հարաբերությունները։

2. Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողները կամ Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձինք իրենց քաղաքացիության կամ հիմնական բնակության կամ հնարավոր երրորդ՝ միջանցիկ երկրներ մուտք գործելու համար անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթերի և վիզայի ստացման գործում աջակցություն ստանալու համար միգրացիայի հարցերով լիազոր պետական մարմին (այսուհետ՝ լիազոր մարմին) են ներկայացնում գրավոր դիմում։ Դիմումի օրինակելի ձևը հաստատում է լիազոր մարմինը։

3. Ապաստան հայցողները դիմումով միջնորդում են նաև Հայաստանի Հանրապետությունում իրենց ապաստան տալու մասին դիմումի կապակցությամբ լիազոր մարմնում հարուցված վարչական վարույթը կասեցնելու, իսկ Հայաստանի Հանրապե-

տությունում փախստական ճանաչված անձինք՝ իրենց որպես փախստական ճանաչելը դադարեցնելու վերաբերյալ։

4. Լիազոր մարմինն ապաստան հայցողներին 3-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է այն մասին, որ իրենց ապաստան տալու մասին դիմումի կապակցությամբ լիազոր մարմնում հարուցված վարչական վարույթը կկասեցվի նրանց կամավոր վերադարձի պահից։

5. Լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց 3-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է այն մասին, որ նրանց որպես փախստական ճանաչելը կդադարեցվի, եթե նրանք Հայաստանի Հանրապետության տարածքը կամավոր լքելուց հետո 3 ամսվա ընթացքում չեն վերադառնա Հայաստանի Հանրապետություն և հետ չեն վերցնի կամավոր վերադարձի մասին դիմումը։

6. Կամավոր վերադարձի մասին դիմումն ստանալուց հետո 20-օրյա ժամետում լիազոր մարմինը միջոցներ է ձեռնարկում ապաստան հայցողներին կամ փախստականներին իրենց քաղաքացիության կամ հիմնական բնակության երկրում առկա իրավիճակի մասին մանրամասն և օբյեկտիվ տեղեկություններ ձեռք բերելու համար։ Լիազոր մարմինն այդպիսի տեղեկությունները ձեռք է բերում սեփական նախաձեռնությամբ՝ իր հաշվին (ինտերնետային կայքերի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների հրապարակումներից) և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, Միավորված ազգերի կազմակերպության փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակի, Միգրացիայի միջազգային կազմակերպության, հասարակական կազմակերպությունների և այլ մարմինների հետ համագործակցությամբ։

7. Լիազոր մարմինը ձեռք բերված բոլոր տեղեկությունները տրամադրում է ապաստան հայցողներին կամ փախստականներին։

8. Եթե լիազոր մարմինը ձեռք բերված տեղեկությունների հիման վրա գտնում է, որ ապաստան հայցողի կամ փախստականի վերադարձն իր քաղաքացիության կամ հիմնական բնակության երկիր անվտանգ չէ, ապա լիազոր մարմինը դրա մասին տեղեկացնում է ապաստան հայցողին կամ փախստականին և անհրաժեշտ ճամփորդական փաստաթուղթ կամ վիզա ստանալու հարցում նրան աջակցում է միայն այն դեպքում, եթե ապաստան հայցողը կամ փախստականը տալիս է գրավոր համաձայնություն այն մասին, որ թեև ինքը տեղեկացվել է, որ կամավոր վերադարձն անվտանգ չէ, սակայն ցանկանում է կամավոր վերադառնալ իր քաղաքացիության կամ հիմնական բնակության երկիր: Գրավոր համաձայնության օրինակելի ձևը հաստատում է լիազոր մարմինը:

9. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, լիազոր մարմնի միջնորդության հիման վրա, 3-օրյա ժամկետում դիմում է ապաստան հայցողների քաղաքացիության կամ հիմնական բնակության երկրների դեսպանություններին՝ այդ անձանց անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթեր տալու հարցում աջակցելու խնդրանքով:

10. Եթե ապաստան հայցողի կամ փախստականի՝ իր քաղաքացիության կամ հիմնական բնակության երկիր վերադարձը հնարավոր է միայն երրորդ՝ միջանցիկ երկիր մուտք գործելու միջոցով, ապա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, լիազոր մարմնի միջնորդության հիման վրա, 3-օրյա ժամետում դիմում է երրորդ՝ միջանցիկ երկրի դեսպանությանը՝ այդ անձին վիզա տրամադրելու խնդրանքով:

11. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն ապաստան հայցողներին կամ փախստականներին՝ իրենց քաղաքացիության կամ հիմնական բնակության կամ հնարավոր երրորդ՝ միջանցիկ երկրներ մուտք գործելու համար անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթերի և վիզայի ստացման գործում

աջակցության հարցերում իր կողմից ձեռնարկված միջոցների արդյունքների մասին 3-օրյա ժամկետում տեղեկացնում է լիազոր մարմնին։

12. Լիազոր մարմինը սույն կարգի 6-րդ կետում նշված տեղեկությունները ձեռք բերելուց հետո 3-օրյա ժամկետում՝ ապաստան հայցողներին կամ փախստականներին տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն և նրանց ուղղորդում համապատասխան մարմիններ՝ ճամփորդական փաստաթղթեր և վիզա ստանալու համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ